ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

ա1) Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների համար.

ա[2]) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

բ) ***(կետը հանվել է 28.12.98 ՀՕ-277)***

(…)

Հոդված 9. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքի դրույքաչափերը

(վերնագիրը փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն, խմբ. 09.02.18 ՀՕ-111-Ն, 19.04.21 ՀՕ-177-Ն)

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝	
ժ. ~~կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու~~ կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու,	բազային տուրքի 10-

դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների դեմ բողոքներով	ապատիկի չափով
11) վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝	
ժ. ~~կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու~~ կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ գործերով վերաքննիչ դատարանի որոշումների դեմ բողոքներով	բազային տուրքի 20-ապատիկի չափով

4. Դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ), գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչներ և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրկնօրինակ տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

2) հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ուղարկած կատարողական թերթի թղթային պատճենը տրամադրելու համար՝	բազային տուրքի չափով

Հոդված 9.2. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափը

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափով.

1. Կատարողական վարույթի մասնակիցներին վարույթի նյութերից պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար՝	բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով:

Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

9) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. ~~կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու~~ կատարողական վաղեմության ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

12) դիմողները՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման ~~համար կատարողական թերթ տալու~~ ներկայացնելու դիմումների համար.